ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

**24.02.2017թ.**

Նիստին մասնակցում էին` Ս. Ամիրխանյանը, Վ. Հակոբյանը, Ա. Զանգեզուրյանը,
Ն. Դովլաթյանը, Ա. Հովեյանը, Ա. Մարուխյանը,
Վ. Ավետիսյանը, Մ. Մարինոսյանը
Նիստը վարող` քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյան
Նիստը արձանագրող` քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարինե Մանուկյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## *<u>ՕՐԱԿԱՐԳ</u>*

1. ,,Գավառի պետական համալսարան" հիմնադրամի ռեկտոր Ռուզաննա Խաչիկի Հակոբյանին Գավառի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին:
2. Գավառ քաղաքի Ազատության փողոց, 1-ին նրբանցք, 1-ին փակուղի N1/20 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող օրինական ճանաչված 67.24ք.մ. ընդհանուր ներքին մակերեսով ավտոտնակը և ավտոտնակի զբաղեցրած 0.00506հա մակերեսով հողատարածքը վարձակալական իրավունքով տրամադրելու, ավտոտնակի և հողամասի վարձավճարների չափերը, օգտագործման ժամկետը սահմանելու մասին:
3. Գավառ համայնքի 2017թ. պահուստային ֆոնդից գումար տրամադրելու մասին:
4. Գավառ քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող և ,,Գավառ քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում" ՀՈԱԿ-ի օգտագործմանը հանձնված 15 /տասնհինգ/ հատ 60 /վաթսուն/ լիտր տարողությամբ պլաստմասսե ,,Դինովա" և 50 /հիսուն/ հատ 240 /երկու հարյուր քառասուն/ լիտր տարողությամբ պոլիէթիլենային աղբարկղերը խոտանելու և Գավառի քաղաքապետարանի հաշվեկշռից դուրս գրելու մասին:
5. Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի բնակիչների անվամբ գրանցված թվով 11 /տասնմեկ/ ջրային փոխադրամիջոցները Գավառի քաղաքապետարանի գույքահարկի շտեմարանից դուրս գրելու մասին:
6. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերը օգտագործման տրամադրելու և տարեկան վարձավճար սահմանելու մասին:
7. Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին:
8. Գավառ համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին:
9. ,,Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն" ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու մասին:

Հարց 1

ՈՐՈՇՈՒՄ 4. ,,ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ՚՚ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ ՌՈՒԶԱՆՆԱ ԽԱՉԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Կ. Մանուկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյանը, Վ. Ավետիսյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 26) կետով, հիմք ընդունելով Ռուզաննա Խաչիկի Հակոբյանին ,,Գավառի պատվավոր քաղաքացի՚՚ կոչում շնորհելու նախաձեռնող խմբի դիմում-հիմնավորումը և հաշվի առնելով Ռուզաննա Խաչիկի Հակոբյանի գործունեությունն ու մեծ ներդրումը կրթության ոլորտի զարգացման գործում, երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական աշխատանքներում ունեցած զգալի ավանդը, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

,,Գավառի պետական համալսարան՚՚ հիմնադրամի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, ՀՀ Նախագահի խրախուսական պարգևի ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվոգրի, Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի հոբելյանական ոսկե հուշամեդալակիր, Խաղաղության նոբելյան մրցանակի դափնեկիր Ֆրիտյոֆ Նանսենի ոսկե մեդալակիր, Ռուզաննա Խաչիկի Հակոբյանին շնորհել ,,Գավառի պատվավոր քաղաքացի՚՚ կոչում:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԴՈՎԼԱԹՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 2

ՈՐՈՇՈՒՄ 5. ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ N1/20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 67.24Ք.Մ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 0.00506ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Մարտիրոսյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Մ. Մարինոսյանը, Վ. Հակոբյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21) կետի և ՀՀ կառավարության 18.05.2006թ. 912-Ն որոշման IV-րդ բաժնի, IV-րդ բաժնի 34.2 ենթակետի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Ազատության փողոց, 1-ին նրբանցք, 1-ին փակուղի N1/20 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 67.24ք.մ. ընդհանուր մակերեսով ավտոտնակը և ավտոտնակի զբաղեցրած 0.00506հա մակերեսով հողատարածքը համապատասխանաբար՝ 5060 /հինգ հազար վաթսուն/ ՀՀ դրամ և 10120 /տաս հազար մեկ հայուր քսան/ ՀՀ դրամ տարեկան վարձավճարներով՝ վարձակալության իրավունքով տրամադրելու ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Ջեմմա Մուխիկի Ղաջոյանին մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ օգտագործման ժամանակով:

| Կողմ (8) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ | | |
| ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ | | |
| ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ | | |
| ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ | | |
| ՆՈՒՆԵ ԴՈՎԼԱԹՅԱՆ | | |
| ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ | | |
| ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ | | |
| ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ | | |

Հարց 3

ՈՐՈՇՈՒՄ 6. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ. ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյանը, Ն. Դովլաթյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության ՀՕ-337 օրենքի 90-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով, որ Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Հ. Աբրահամյան 1 հասցեում 2016թ. հոկտեմբերի 10-ին ծագած հրդեհի հետևանքով այրվել են Գառնիկ Գրիգորի Կարեյանին պատկանող խոտի հակերի դեզը, Գավառ քաղաքի Զորավար Անդրանիկի 3-րդ փողոց, տուն 3 հասցեում 2017թ. հունվարի 6-ին ծագած հրդեհի հետևանքով այրվել են Արտիկ Վոլոդյայի Բադալյանին պատկանող խոտի հակերի դեզը, Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի բնակիչ Պետրոս Պետրոսյանին պատկանող անասնագոմի տանիքը առատ ձյան հետևանքով փլվել է, Գավառ քաղաքի Զարզարյան 24 հասցեի բնակիչ Կարեն Ռաֆիկի Բալազոզյանը ունի առողջական խնդիրներ և հրատապ բուժման կարիք, ինչպես նաև Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ազատամարտիկների 21 փողոց, բն. 5 հասցեի բնակիչ Լևոն Ազատի Բախտիկյանի տղան ծառայում է ԼՂՀ ԶՈՒ-ում, մասնակցել է քառօրյա պատերազմին, որի ժամանակ կորցրել է 13 ատամ, ունի առողջական խնդիրներ և բուժման կարիք Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ Գավառ համայնքի 2017թ. բյուջեի պահուստային ֆոնդից՝

1) 4729 /այլ նպաստներ բյուջեից/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել ընդամենը 850 000 /ութ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ դրամական օգնություն, որից՝
   1. Գառնիկ Գրիգորի Կարեյանին՝ 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ
   2. Արտիկ Վոլոդյայի Բադալյանին՝ 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ
   3. Պետրոս Վանիկի Պետրոսյանին՝ 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ
   4. Կարեն Ռաֆիկի Բալազոզյանին՝ 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ

5. Լևոն Ազատի Բախտիկյանին՝ 150 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ

2) 4819 /նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ տնտեսագիտական հոդվածով ,, Հայկական կարիտաս'' բարեսիրական ՀԿ-ին նվիրատվության կարգով տրամադրել 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ Գավառ համայնքում իրականացվող ,,Տաք ճմեռ անապահով երեխաներին'' և ,,Տաք ձմեռ տարեցներին'' ծրագրերի իրականացման համար:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԴՈՎԼԱԹՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 4

ՈՐՈՇՈՒՄ 7 ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ,,ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ'' ՀՈԱԿ-Ի ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՆՁՆՎԱԾ 15 (ՏԱՍՆՀԻՆԳ) ՀԱՏ 60 (ՎԱԹՍՈՒՆ) ԼԻՏՐ ՏԱՐՈՂՈՒԹՅԱՄԲ ՊԼԱՍՏՄԱՍՍԵ ,,ԴԻՆՈՎԱ'' ԵՎ 50 (ՀԻՍՈՒՆ) ՀԱՏ 240 (ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆ) ԼԻՏՐ ՏԱՐՈՂՈՒԹՅԱՄԲ ՊՈԼԻԷԹԻԼԵՆԱՅԻՆ ԱՂԲԱՐԿՂԵՐԸ ԽՈՏԱՆԵԼՈՒՆ ԵՎ ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌԻՑ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Գևորգյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Վ. Ավետիսյանը, Ա. Զանգեզուրյանը

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարմն մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով և 18-րդ հոդվածի 42 կետերի, ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով ,,Աղբարկղերի և ջրային փոխադրամիջոցների պիտանելիության վիճակի ուսումնասիրման նպատակով հանձնաժողով ձևավորելու մասին'' Գավառի քաղաքապետի 2017 թվականի հունվարի 10-ի թիվ 1 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 2017թ. հունվարի 27-ի արձանագրությունը, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող և ,,Գավառ քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում'' ՀՈԱԿ-ի օգտագործմանը հանձնված 15 /տասնհինգ/ հատ 60 /վաթսուն/ լիտր տարողությամբ պլաստմասսե ,,Դինովա'' և 50 (hիսուն) հատ 240 /երկու հարյուր քառասուն/ լիտր տարողությամբ պոլիէթիլենային աղբարկղերը խոտանելուն և Գավառի քաղաքապետարանի հաշվեկշռից դուրս գրելուն:
2. Գավառ քաղաքային համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԴՈՎԼԱԹՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 5

ՈՐՈՇՈՒՄ 8. ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ԹՎՈՎ 11 /ՏԱՍՆՄԵԿ/ ՋՐԱՅԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՇՏԵՄԱՐԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Գնորգյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Հովեյանը, Մ. Մարինոսյանը

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարմն մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով և 18-րդ հոդվածի 42 կետերի, ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով ,,Աղբարկղերի և ջրային փոխադրամիջոցների պիտանելիության վիճակի ուսումնասիրման նպատակով հանձնաժողով ձևավորելու մասին'' Գավառի քաղաքապետի 2017 թվականի հունվարի 10-ի թիվ 1 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 2017թ. հունվարի 27-ի արձանագրությունը, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի բնակիչների անվամբ գրանցված թվով 11 (տասնմեկ) ջրային փոխադրամիջոցները Գավառի քաղաքապետարանի գույքահարկի շտեմարանից դուրս գրելուն:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԴՈՎԼԱԹՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 6

ՈՐՈՇՈՒՄ 9. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Մ. Մանուկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Մարուխյանը, Վ. Հակոբյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 21) կետով, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 2-րդ կարգի 50հա մակերեսով, 3-րդ կարգի 100հա մակերեսով, 4-րդ կարգի 150հա մակերեսով և 5-րդ կարգի 80հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողերը, 3-րդ կարգի 100հա մակերեսով, 4-րդ կարգի 10հա գյուղատնտեսական նշանակությանխոտհարքները առավելագույնը մինչև 25 տարի օգտագործման ժամկետով տրամադրել վարձակալության /ցուցակները կցվում են/
2. Նշված հողատեսքերից 2-րդ կարգի մեկ հեկտոր վարելահողի տարեկան վարձավճարը սահմանել 7500 /յոթ հազար հինգ հարյուր/, 3-րդ կարգի մեկ հետար վարելահողի տարեկան վարձավճարը՝ 6200 /վեց հազար երկու հարյուր/, 4-րդ կարգի մեկ հեկտար վարելահողի տարեկան վարձավճարը՝ 4200 /չորս հազար երկու հարյուր/, 5-րդ կարգի մեկ հեկտար վարելահողի տարեկան վարձավճարը 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ, 3-րդ կարգի մեկ հեկտար խոտհարքի տարեկան վարձավճարը՝ 3650 /երեք հազար վեց հարյուր հիսուն, իսկ 4-րդ կարգի մեկ հեկտար խոտհարքի տարեկան վարձավճարը՝ 2200 /երկու հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ:

| Կողմ (8) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ | | |
| ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ | | |
| ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ | | |
| ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ | | |
| ՆՈՒՆԵ ԴՈՎԼԱԹՅԱՆ | | |
| ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ | | |
| ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ | | |
| ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ | | |

Հարց 7

ՈՐՈՇՈՒՄ 10. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Բոշյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյանը, Մ. Մարինոսյանը

Ղեկավարվելով ,,Գույքահարկի մասին'' ՀՀ օրենքի 15 հոդվածի 3 կետի, և ,,Տեղական Ինքնակառավարման մասին '' ՀՀ օրենքի 18 հոդվածի 42) կետի դրույթներով, նկատի ունենալով, որ ներքոհիշյալ կազմակերպությունները վճարել են իրենց շենքերի և շինությունների գույքահարկի և հողի հարկի մայր գումարները, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ կից ցուցակով ներկայացված անձանց նկատմամբ սահմանել հարկային արտոնություն

| Հ/Հ | ՀՎՀՀ | ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ | ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿԸ | ՏՈՒՅԺ |
|---|---|---|---|---|
| 1 | 08417605 | ,,ԵՐՅՈՒՆԱ" ՍՊԸ | շին. | 8200 |
| 2 | 08418022 | ,,ԽԱՉ-ՄԱՑ" ՍՊԸ | շին. | 34315 |
| 3 | 02502298 | ՀԱՅԱԳՐՈԲԱՆԿ | շին. | 2890 |
| 4 | 08402676 | ,,ԳԵՂԱՄԱ-96" ՍՊԸ | շին. | 7250 |
| 5 | 08419678 | ԱՐՄ ՍՊԸ | շին. | 27990 |
| 6 | 08419678 | ԱՐՄ ՍՊԸ | հող | 615 |
| 7 | 08412103 | ,,ՀԱՅՈՎ- ԱՌԱՏ" ՍՊԸ | շին | 9220 |
| 8 | 08412103 | ,,ՀԱՅՈՎ- ԱՌԱՏ" ՍՊԸ | հող | 1920 |

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԴՈՎԼԱԹՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 8.

ՈՐՈՇՈՒՄ 11. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Մարտիրոսյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ն. Դովլաթյանը, Ս. Ամիրխանյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 4) կետով Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ հաստատել Գավառ համայնքի 2016-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիրը:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԴՈՎԼԱԹՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 9

ՈՐՈՇՈՒՄ 12. ,,ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ’’ ՀՈԱԿ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Մարուխյանը, Վ. Ավետիսյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28) կետի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ 27.12.2016թ. թիվ 7 նիստի թիվ 3 որոշմամբ հաստատված ,,Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն’’ ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում կատարել փոփոխություն.

1. ,,Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն’’ ՀՈԱԿ-ում կրճատել ,,Խոսքի զարգացում’’ խմբակավարի հաստիքը:

| Կողմ (8) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ | | |
| ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ | | |
| ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ | | |
| ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ | | |
| ՆՈՒՆԵ ԴՈՎԼԱԹՅԱՆ | | |
| ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ | | |
| ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ | | |
| ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ